



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱԾԱՆԻԿԱՆ ՊԱՏՐԱՐԱՐԱՆԻ

ՄԱՐ ԶԱՐԳԱՆՄԱՆ ՍԵՐԻԱ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 135


21 ՓԵՏՐՈՒԱՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԱՐԱՐԱՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ



Փետրուար	22	† Կիր. ղկ.	Բուն Բարեկենդան
	23	Բշ. աճ.	Ա. or Մեծ-Պահոց
	24	Գշ. ալկ.	Բ. or »
	25	Դշ. քճ.	Դ. or աղցից: Or մեռելոց:
	26	Եշ. քկ.	Դ. or »
	27	Ուր. գճ.	Կ. or »
	28	Շք. զկ.	Զ. or Մեծ-Պահոց: Եւ Թեոդորոսի զօրա- վարին :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Զորրոզ տարի 21 Փետրուար 1914 թիւ 135

«Սրբազան Բաղնայայտեն Գիտ ժ. կը մաղթե որ Գաթոյիկէ Արձագանգ շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մերի ժլ. Կալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ժ.Գ. Թերզեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընկ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ԱԿՋԻՈՒՆՔՆԵՐ

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐԿԱՅ ԱՆՑԳԵՐՈՒ ՎՐԱՑ

Բերս, 12 Փետ. 1914

Գերապայծառ Տէր խմբագրապետ,

Վերջապէս կը սկսիմ զարեանալ, եւ կիւտով մը դասապարտեմ իսկ. պատուական քերթիդ յոռիքներ, գրեթէ՝ պիտի չսկի Ձախարիական պապանձումը, ամենակենսական խնդիրներու եւ ներկայ կարեւոր անցիւրու վրայ, որոնք յիշուի մեծապէս կը շահագրգռեն անհոյժ Հասարակութիւնս: Ահա շուրջ մի քանի ամիսներէ ի վեր է որ համաձայնութեան շշուկներ, խօսակցութիւններ, մասնաժողովներ տարբերակ եւ Արձագանգ յոնց. հակառակորդներն

իրենց ուզած ձեւերով խօսեցան, մեկնաբանեցին, «սրամայնեցին, եւ Պատրիարքաւորի պաշտօնական քերթը յոնց, միեւն իսկ եւ ոչ քսումը սրտասուեց... զարեանալի՜ .. Դարձեալ, անդին դասապարտած քերթը շարունակեց, անխղճօրէն, իր սուտերուն, նախասինկներուն, զորպարտութիւններուն հեղեղները. անոր մէջ անդադար գրուեցաւ թէ Համաձայնութեան համար քանակներէս զիտեր են քանադրեալներուն, անոնց քախսանձեր են, ոտներէն չզեր են, — քոյր իր անկիրք եւ կրֆոս անխաղէ քաջարութիւնները, որ իր խախտիւնը ցոյց կուտան, — եւ սակայն յոնցիք դուք. այդ քերթը կրկնեց անդադար թէ՛ համաձայնութեան առանց որոյ ոչ պայմաններ էին՝ Գաթոյիկոսի հրաժարեցումը, ժողովրդեան շնորհակալ, հակալիշակալ եւ սիրապետական իրաւանց ընդունելութիւնն ու վաւերացումը, եւ սակայն դուք

րեցիք. վերջապէս նա զկէտն անբասանեց
— անստօրաբար, — իբր ցածոգի, դրամապաշտ,
միայն իր շահուն ծառայող, ազգին դրամները
շորթող, եւն. — միևնոյն աշխատեց, ան-
կիրք եւ դատաւարանու Մեհմուտան Է որ ազ-
գին, մանաւանդ, աւաճող, եկեղեցիներուն ունի-
նելովը կը գործէ ա՛յնքան չարիք եւ կը ցանկ
գայրակողութիւն. միևնոյն հակառակորդներուն
շատերը իրենց շահուն միայն կը ծառայեն, եւ
ազգապիտոյքին եւ ազգին իրաւանց պաշտպա-
նութիւնը քարոզելով եւ քահանայները իբրեւ շա-
հախնդիր դատաւարներով հանդերձ՝ իրենք, ան-
հախնդրաց կերպով ամապաններ կ'առնուն,
Բաքիկիսանեհն, Ռումուստանեհն, եւայլն...
աւտոնք եւ եղեր անճարախնդիր պաշտպաննե-
րը ազգին!!!... սպա ուրիշ ինքնակաշտութեանց,
Հոգաբարձութեանց համար ալ այլընդայլոյ խոս-
քեր կը շրջին... արդ, այս ամէնուն առջեւ միշտ
լուծեց, յանձնաբար լուծեց Ձեր բերքը: Ինչո՞ւ
անխնամալի՞ առեղծուած:

Կը հաճե՞իք գոնէ այս գրութեանս գոհա-
ցուցիչ պատասխան մը ընտրել, յիշատի երախ-
տագէտ պիտի մնայի Ձեզ, ես՝ եւ ինծի հետ շա՛տ
յարտի հաւաստեցեալներ:

Հաճեցե՞իք, Գերապայծառ Տէր, ընդունել
յուրին յարգանքս հաւաստիք:

ԲԵՐԱՅԻ

Խմբ. Արձագանգի. — Այս նամակը՝ յար-
գադիր ձեւերով, ներքը կը դնէ զմեզ, ինչ-
պէս Փրանսացիք կ'ըսեն՝ au pied du mur.
Պատշաճ կը դատենք շատ հակիրճ պատաս-
խանով մը գոհացնել աս բարեխիղճ հաւա-
տացեալը:

Նախ՝ պէտք է գիտնայ ինքը թէ՛ մենք
ինչպէս միշտ, բնաւ կարեւորութիւն մը չենք
տար Մեհմուտ Գատապարտուած թերթին
ուստերուն, զրպարտութիւններուն, նախա-
տինքներուն. նոյնպէս որ և իցէ և ամենա-
փոքր իսկ կարեւորութիւնէ զուրկ են՝ մեզ
զրադեցնող խնդիրներուն համար իրեն ըրած
չաղփաղփութիւնները, կեղծուպատիր դիտո-
ղութիւնները. Ի յաւելումս այս խոսքի
բերան. ո՞վ չգիտէր թէ ան և իր նմանները
չեն փափաքիր բնաւ որ մեր խնդիրները բա-

րի վախճանաւ մը պատկուին, զի վստահօրէն
գիտեն թէ իրենց շահը պիտի դադրէ, ճիշդ
ինչպէս Պողոս Առաքելոյն դէմ գործեցին Կո-
ղովեալիցիք (Գործ. ԺԶ.) որ բռնկած ըլլա-
լով այսահար աղախինը, անոր տէրերը բար-
կացան, քանզի «Տեսին... եթէ հասաւ յոյս
եանի նոցա»... Ուստի պատուական նա-
մակագիրը թող համոզուի որ մենք բնա-
ստիպուած չենք զգար զմեզ այդ թերթին
ամէն անիրաւութեանց միշտ պատասխանե-
լու. միայն մերթ ընդ մերթ իբրեւ սրբապան
պարտք մը զայդ կ'ընենք՝ բարձրերը զգու-
շացնելու համար:

Գալով բուն խնդիրներուն, կը յայտարա-
րենք որ մեր լռութիւնը բնական էր. քան-
զի անցած դարձած բանակցութիւնները բա-
ցարձակապէս անպատշաճ և անհատական
հանգամանքունէին, ու մենք. ինչպէս պէտք
է՝ մեր թերթը նկատելով պատշաճական,
չէինք կրնար անոնց այն կարեւորութիւնը
տալ, ինչ որ հակառակորդք կ'ուզէին որ
տրուի, աւ ի ցոյցս մարդկան. Այն կղերա-
կանները որոնք, նոյն իսկ ոչ-եկեղեցական
բարձրագոյն դրոշմներով, կը ձեռնարկէին
ներկայ խնդիրը յարգարեւ աշխատելու, կը
գործէին անհասարար, իբրեւ Հայ Կաթողի-
կէ եկեղեցականներ, եւ ոչ ի պատշաճ.
միայն սա կար՝ որ Հոգեւոր իշխանութիւնը
արգելք մը չէր դրած անոնց այս բարեացա-
կամ ձեռնարկեցութեան: Ինչո՞ւ կ'ընէին զայս.
որովհետեւ միշտ կ'ամբաստանուէին իբր ան-
գործունեայ, իբր մեղկ և թոյլ, որ չեն
աշխատիր իրենց յանձնուած հօտը լուսաւո-
րելու, թիւրփմացութիւնները լուսաբանելու,
մոլորեալները դարձնելու, եկեղեցական սկզբ-
բունքները բացատրելու. ահա բոլոր աս բա-
նները կատարած ըլլալու համար է որ վերո-
յիշեալ եկեղեցականները աս բանակցութիւն-
ները բացին ու շարունակեցին, մինչև այն
կէտը, ուր ստիպուեցան կանգ առնելու, Ե-
կեղեցւոյ իրաւունքն ու սկզբունքները պար-
զած և անոնց ընդունելութեան անհրաժեշ-
տութիւնը այլ եւս ան յանդիման ցուցա-
դրած ըլլալով: Խնդիրը այս վիճակի մէջ ըլ-
լալուն, ի՞նչ նշանակութիւն կրնան ունե-

հալ ասոր անոր մոռցածին պայմանները : Համաձայնութեան պատուական Կաթողիկէ Եկեղեցին իր սկզբունքներէն բնաւ չի կրնար զոհել այլոց քմահաճոյից համար . և ո՛վ որ Կաթողիկէ է , պէտք է որ ընդունի զանոնք և անպայման հնազանդի անոնց . հակառակը գործողը կամ սորվեցնողը Կաթողիկէ չի կրնար ըլլալ :

Կը հետեւի ուրեմն որ կատարուած այդ բառակցութիւնները չեն կրնար՝ ճիշտը խօսելով , Համաձայնութիւն բառով որակուիլ , եթէ ոչ ընդարձակ առժամով : Զի Եկեղեցին իր սկզբունքներուն համար բնաւ մէկու մը հետ համաձայնութեան չի կրնար գալ , ըլլայ նոյն իսկ Հիւսիսային ի . Կայսր մը կամ Եւրոպէոս մը . նոյն իսկ եթէ չարաչար ու անդադար հալածուի . զանոնք կը լուսաբանէ , կը հասկըցնէ , և ամէն Կաթողիկէ զանոնք կ'ընդունի . ահա՛ այսչափ : Եւրոպէոս ըրին ուրեմն մեր քահանաները , պարզելով այն էֆէնտի-նիզմը՝ որոնց հետ իբրեւ Հայ Կաթողիկէ անհասկեր միայն նանչնալով գումարուեցան , այն ամէն սկզբունքները որոնց մէջ Կաթողիկէ Եկեղեցւոյն որոշողութեանց պէտք էր հպատակիլ :

Ուստի , հակառակ Մէճմուայի կրքոտ պոռոտախօսութիւններուն , Ամեն . Թէրզեան Պօլ . Պ . Ժ.Գ . մըջա Կ . Պատրիարքն է Կիւիկիոյ , ցորչափ անսխալ Քահանայապետն մեր՝ Ս . Եկեղեցւոյ Գլուխը այնպէս հրամայէ , որովհետեւ Կաթողիկէ ըլլալու համար պէտք է իր Եպիսկոպոսին հետ ըլլալ , և Ս . Քահանայապետին բացարձակ հպատակիլ . — ուստի եկեղեցական ստացուածքներու մատակարարութիւնն անձնունմիսի է , և միայն անիւրաւ հալածանքը կրնայ զանոնք յափշտակել . — ուստի , Եպիսկոպոսաց ընտրութիւնը միայն Սինոդոսի է , իսկ Ժողովուրդը և կղեր քարի վկայութիւն միայն կուտան , այլովքն հանգերձ :

Հետեւեալը պատուական նամակագիրը և իրեն հետ ամէն բարի հաւատացեալ կրնայ վստահ ըլլալ որ Ս . Եկեղեցւոյ իրաւունքներն վերջնականապէս պիտի պաշտպանուին , անաղարտ և անխախտելի կերպով , և պիտի գրուին անյեղլի հիմքու վրայ , այսուհետեւ թիւրքմացութիւններու տեղի չտալու համար . և այս պիտի ըլլայ ամեն վնով , coûte que coûte .

Կարծենք թէ այս կարի համառօտ պատասխանով կրնայ առ այժմ գոհանալ մեր պատուական Բերացին :

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ (*)

Պ Է Շ Ի Ն Ճ Ի Պ Ս Պ

Յիսուս Բրիստոս եւմ ինքան եվլաօր վէ եւմ օէ Ալլահըն էվլաօր օր :

(Տէվամի)

Պու գատար ալի քէլամլարըն սատըր օլուողը գալպի նէճիպի տիւշիւնիւպ տէ միւլթէէսսիր օլմամագ գապիլ մի . Հագիգաթէն տէ պու քէլամլարը թէլէֆֆիւպ էյլէյէն ֆիքիր ալի . օնլարը թէվլիտ էյլէյէն վիճտան բաք , ճէլլի վէ նուրանի օլմագ կէրէք տիր : էյլէ իտէ , ինսանլարըն էն ագիլի , էն էյիսի , էն ազիլի օլան պու զաթը շէրիֆ ինսանլարըն պօզուողը օլապիլիլ մի . էն հալիմի , էն նամուսըսը , շիմտի էն մաղրուրը օլապիլիլ մի . ինսանըն իտէալը , ինսանըլըն հէր տիւրլիւ քէմալաթընը իւզէրինտէ ճէմ իթմիշ օլան պու ինսանը քեամիլ , պէշէրիյէթին էն խասթասը օլապիլիլ մի . էվլվէթ , էն խասթասը , հէմ տէ ազլէն էն խասթասը օլմագ լաղըմ կէլիրտի , էյէր քի քէնտիսի սատէ պիր ինսան օլուպ տա իրատէթիլլէ , մէվճուտիյէթիլլէ , էվսաֆըյլա քէնտի քէնտինի նիհայէթսիւպ պիր Ալլահ եէրինէ գօյօրտը իտէ : Հիշ պիր ֆէրտի աֆէրիտէ քիւֆր վէ ճիննէթլէ մըլթթէհիմ օլմագըղըն պու գատար շուճուլլու , պու գատար տէրին վէ պէյլէ եէկեանէ պիր մանասա պիր տապիգա պիլլէ Յիսուսըն լիսանընը գուլլանամայաճագ վէ օնուս իքթիսապ իթաիյի թաղըն ալամայաճագսր : Վէ պաշգալարընըն ազլընտան իշիտիլտիյինտէ , հիտաթթ ու զապալըմըղը մուճիւպ օլաճագ օլան պու քէլամլար , Յիսուսըն տուտաղարըն իւզէրինտէ պիլլէ բէք թապիլի կէօրիւնիւրլէր : Սնլար Յիսուսա տահա թապիլի կէօրիւնիւրլէր , չիւնքի օ քէլամլար խարիւր իւլ առէ պիր հայաթ վէ թապիլիլք խարիւրինտէ եաբըմըն իշէր իւզէրինէ պինա օլընաղպարընտան , պիզգաթ Յիսուսա իման էթմէյէնլէր պիլլէ օնը ալուտիլըճըրդ , հէվաբէրէսթիլք (ուսայնասիրու թիւն) վէ եալստ մաղրուրըղպա իթհամ էթմէյէն ճէ :

(*) Տէմ թիւ 133, էջ 84 :

սարէթ իտէմէյօրլար: Արթրգ պու գատարը ազըլ ինսանը աճիզ պրագմաղա քիֆայէթ է-տէր:

Վէ շայէա Յիսուսըն քէնտի Ալլահլըղընա տաիր պանաաթը վիճտանիյէսի հագզընտա չիմտիյէ գատար սէրտ իտիլէն պիւրհանլար-տան պաշգա պիր պիւրհան տահա իսթէնի-լէճէք օլուրսա, պէն օնըն՝ քէնտի պէօյիւք իշինի պաշա չըգարմագ խուսուսընտա կէօս-թէրտիյի հալի պաշգա հէր տիւրիւ տէլիլ վէ պիւրհանլարա թէրճիհ էլլէրտիմ: Ինսան-լարը թէնվիր իթմէք վէ շիֆաեապ էլլէմէք էշինն հալընըզ պիր չարէ վար տըր, օ տա քէնտիսինէ իման իտիլմէք իւզըն նէֆսինի ալէմէ արզ իթմէք հանի հէր քէսին մէհապ-պէթինի, չայրէթինի վէ սէճտէսինի տալէթ վէ թալէպ էլլէմէք տիր: Փագաթ պու սու-րէթլէ քէնտիսին արզ էլլէնէնին քէնտին տէ պուճա պու գատար եիւքսէք թալէպէ պիր հագզ, պիր լիյաբաթ վէ պիր իյթիտար վար օլտուղընը թանըմագ շարթ տըր: Եօզ-սա պու սուրէթլէ իտարէյի քէլամ էտէնին, ալէմին սէճտէսինէ ֆիզուլի եէրտէ արզու իթտիյինէ հիւքմ իտիլիւ: Էվլէթ, պէշէրի-յէթի տիւզէլթմէք, օնըն հարալարընը սար-մագ, օնը ֆագիլէթէ գատար եիւքսէլթմէք հէր տիւրիւ ֆագիլէթլէր իճրասընա գօպի-լիյէթլի էթմէք իշուճ, Յիսուս Քրիստոս ան-ճագ պիր չարէ պիլիյօր: քէնտինի, հալընըզ քէնտինի թանըմագ, քէնտինի սէվմէք վէ քէնտիսինէ սէճտէ իթմէք տիր: Էօյրէթտիյի վագըթ, մագսատը եէնի պիր սիսթէմ արզ իթմէք տէյիլ տիր: Ֆիքրինի անլաթմագ տըր: չարչարանք չէքմէսի, էօլմէսի, մահլա մէհապպէթինի կէօսթէրմէք իշուճ տըր: Խա-չըն իւզէրինտէ «ամնհայն ինչ կասարեալ է», «հէր չէյ թէքմիլ օլմուշ տըր» տէտիյինտէ: հագիլգաթը հալտէ աուսի բուհընը քեամիլէն տչմըշ, պիւթիւն ալէմէ կէօսթէրմիշ պուլու-նույօրաը: արթըզ օնուճ իշին հարաճագ պիր շէյ գալմամլտը: Բէնտիսինտէն սօնրա շա-կիրտլէր պըրաղըյօր: Փագաթ օնուճ ֆիքրի-նի թամիմ էլլէմէք իշուճ զսնն օլուճմաըն, իլլա պիլգաթ քէնտիսինի վագ իթմէք օնը տչուհայա կէօսթէրմէք, նուր կիպի օնուճ

զիյալարընը հէր թարաֆա նէշը էլլէմէք վէ աաըլ քէնտինին գուլմաուղը թապիր իւզըն բույի գէմինտէ քէնտինէ շահիտլէր օլմագ մագսատընա մէպնի տիր: Օ քէնտի շակիրտ-լէրինէ հալընըզ պու վագիֆէյի թէվտի իտի-յօր վէ օն սէքիզ ասրլար կէշմիշ օլտուղը հալտէ, օնուճ քիլիսասընըն տա հարաղը, պուճտան ֆարզըլ պիր շէյ տէյիլ տիր:

Յիսուս Քրիստոս իլէ, օնուճ կիպի շա-կիրտլէր ճէմ վէ թէշքիլ էլլէնէն պէօյիւք քիմսլէր արասընտա էքսէրի պիր մուգալէսէ իթմէք իսթէնիլմիշ վէ հագիլգաթ ուղրուճա էօլմէք շէրէֆինէ նայիլ օլան Սոկրատըն իո-մի հէման հէր քէսին ֆիքրինէ կէլմիշ տիր: Փագաթ իքիսինին արասընտաքի միւշապէ-հէթ անճագ զահիրի պիր միւշապէհէթ տիր: արալարընտաքի ֆարգ տէրին վէ էսաուս միւթէալիգ տիր: Սոկրատ հագիլգաթը վագ էտէրտի, Յիսուս քէնտի քէնտիսինի վագ էտէրտի: Սոկրատ քէնտինէ էմիյէթ հասըլ իթմէք վէ տէհասընա հայրէթտէ գալմագ նէ-թիճէսի օլարագ քէնտի թալիմաթլարընա թապի օլանլարըն հարաղընա մանթըզըզ վէ նամէշրու իսմի վէրիտի: Յիսուս Քրիս-տոս քէնտի շակիրտլէրինին պանաաթլարընըն ապլա մուվաֆըզ օլուպ օլմատըղըյա մէշղուլ օլմայուպ, օ պանաաթըն քէնտի քէլամա-րընա իմանը գալի իլէ իթիգատ իթմէք է-սասը իւզէրինէ պինա օլուճմաընը թալէպ էտէրտի, Սոկրատ հագիլգաթա պիր մանիա թէշքիլ էլլէմէմէք իշուճ, քէնտինի հիշ եէ-րինէ գօմագստան գաթիէն կէրի տուրմաղտը, վէ օնուճ պու հալի պիր գիքրի էպէտիլէ շա-յան տըր: պիլ աքիս Յիսուս Քրիստոս իսէ, պիր տէյիլիլմէզ սօղուգ գանլըլըզլա քէնտի-սինին միւսթագիլէն հէր քէնտէն իւսթիւն օլտուղընը վէ քէնտինէ իման էթմէք լաղըմ իտուկինի թատիկ էտէրտի: Պինաէն ալէն, էյէր Յիսուս Քրիստոս Սոկրատոսան չօզ չօզ իւսթիւն տէյիլտէ, օնտան չօզ աղաղը օլմալը տըր: Փագաթ պուճլարտան պիր ինսան կի-պի, տիկէրի իսէ Ալլահ կիպի թալիմ իտէր: Պուրատա Բուսօնըն մէշուր պէյանաթընը իգթիպաս իտէրէք տէյէճէյիմ քի, էյէր Սոկ-րատըն թալիմաթը վէ բուհլարը հագիլգաթա

առողրու իրշատ իթմէքտէքի թարգ. ու հա-
րաքեաթը պիր ագիւէ, պիր ալիմէ մախսուս
խէլէր, Յիսուս Բրիստոսըն թալիմաթը վէ
մուսմէլէսի պիր Ալլահա խասս վէ մախսուս
տրր:

(Մապասի վար)

ՏԵՍՈՒՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՔԱՂԱՆԱՅԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՅԻՈՑ

ՈՐՔ ՅԱՐԵԱՆ Ի ՎԵՐԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆԻՐԵԱՆՑ
ԵՒ ՀԱՆԻՆ ՋՆԱ Ի ԳԱՀԷՆ ՎԱՍՆ ՄՈՒՖԹՈՒՆ
ՈՐ ԵՒ ՍՊԱՆԻՆ ՋՆԱ

(Նար.)

Եւ այսու գրով ելեալք ի ճանապարհ գը-
նացին և հասեալ մերձ էտրէնու՝ կալաւ ըզ-
նոսա Պօստանճի Պաշին և էառ զգիրս ի ձե-
ռաց նոցա և աքսորեաց զնոսա յէնէզ, յե-
զերսն սպիտակ ծովուն մերձ ի Պօղազահի-
սար, քանզի հրամանաւ Մուֆթուն պահէին
զճանապարհան, զի մի՛ հասցէ բան սոցա առ
թագաւորն և զգիրսն գորս կալան սարեալ
հոռն ցմուֆթին և նա ծածկեաց զայն ի
թագաւորն. և դարձեալ հրամանս հոռ մուֆ-
թին համախոհիցն իւրոց զի կալցեն զճա-
նապարհս և որոնեացեն բռնութեամբ և եթէ
զթուղթ ինչ գտցեն՝ զայն փութապէս հա-
սուցեն առ նա, և ահաջուսցեն զճանա-
պարհորդսն զի մի՛ զճամբիսն պոր տեսին
և կամ լուանն յիստամպօլ՝ զայն խօսեցին,
այլ քողեցեն և թաքուցեն: Բայց ինքեանք
այլեւայլ խօսիւք լնուին զակոնջան ուսմկին
որ էտրէնէ, ասելով թէ քանի փառքուս
ճէպէճիք յիստամպօլ զուլիֆէ խնդրեալ են
և վասն այնորիկ կամեցեալ են զիստամ-
պօլ ի հուր այրել, և մտեալ ի տունս ոմանց
յափշտակեալ են զինչս նոցա՝ Եւ արդ՝ մին-
չեւ ցայս վայր ծածկէին և թաքուցանէին
զեղեալ իրս ի թագաւորէն, քանզի ոչ ոք
իշխէր ծանուցանել նմա, վասն երկիւղի
մուֆթուն: Սակայն Հասան փաշա ոմն, որ
էր փեսայ թագաւորին և բիքեալ¹ նորին,
զի էր քեռայր՝ առաքեաց զոմն հաւատարիմ

ի սպասաւորաց իւրոց ի Կոստանդնուպօլիս,
լրտեսել ի ծածուկ և տեղեկանալ զիրացն
եղելոց, որ և եկեալ ի քաղաքս և վերա-
հասու եղեալ ամենայն իրացն՝ և դարձու առ
առաքիչն իւր և պատմեաց նմա զամենայն
ստուգապէս: Իբրեւ լուաւ Հասան փաշայն
զբանն՝ առժամայն (յայտնեաց) կնոջն իւրոյ քեռ
թագաւորին, և նա լուեալ և պակեալ տո-
չորիւր, քանզի թարց հրաւիրման և կոչման
թագաւորին կամ մօրն ոչ կարէր գնալ առ
նոսա, վասն զի օրէն էր ի հնոց ի միջի իւր-
եանց. բայց այժմ վասն առաւել տառապե-
լոյ և տաքնապելոյ սրտին ոչ կարաց ժուժել,
այլ առանց կոչման ելեալ շեշտակի գնաց առ
մայրն իւր, և նա տեսեալ զդուստրն իւր
յանկարծ եկեալ թարց հրաւիրանաց յափշե-
ցաւ. եւ ասէ զի՞ է քեզ դուստր իմ. զի՞
այլապունեալ են երեւք քո, եւ զի՞նչ իցեն
պատճառք վալստեան յանդէպ ժամանակի:
Իսկ նա լուութեամբ հառաչէր եւ յոգւոց
հանելով բացեալ զբերանն ասէ ցմայրն, ես
յառաջագոյն կարծէի եւ կասկածանօք վա-
րանէի որ այսպէս լինելոց էր: Ասէ մայրն
զի՞նչ է այդ բան, պատմեա՛ ինձ: Ասէ աղ-
ջիկն ցմայրն, միթէ դո՞ւ միայն կաս յէտրէ-
նէ քաղաքս, որ ոչ իցես լուեալ եթէ յոր-
պիսի խռովութիւն, աղմուկ եւ յամբոխումն
եղեալ է յիստամպօլ եւ օր յաւուր առաւե-
լաւ, քանզի ահա զօրօք մեծաւ եւ պէսպէս
պատրաստութեամբ պան առ ի կոտորել զմեզ
եւ դուք աստ անհոգացեալ նստիք: Եւ
դարձեալ ասէ աղջիկն. միթէ ոչ երբէք
լուեալ իցես վասն եղելոյ մեծ վալիտէին, որ
Քէօսէմն կոչիւր. զի ի ժամանակին յայնմիկ
այսպէս պիտովութիւնս յարուցեալ զօրացն
եւ սպանին զնա¹ եւ այժմ կարծեմ թէ
ըստ նմին սարասի² լինելոց է եւ մեզ եթէ
ոչ վաղվաղակի խորհիցէք զհնարս առ ի խա-

¹ Քէօսէմ Սուլթան, կին Ահմէտայ Ա.ոյ, և մայր
Օսմանայ Բ.ի, Մուրատայ Դ.ի, Իպրահիմայ Ա.ոյ, և
մեծ մայր Մէհմէմէտի Դ.ի Իմաստուն, հեղինակա-
ւոր, տառտաձեռն, գթասիրտ, իշխեցող պատմական
կանանց գերագոյններէն մին եղած է. նոյնքան երե-
ւելի իր խժդժական սպանումով:

² Նոյն կերպով:

¹ Բիքեալ կամ բիքեալթար. ձի նստելու ատեն
ասպանդակը բռնող ծառայն:

զաղեցուցանելոյ զնոսա, ապա թէ ո՛չ մի-
ռանելոց եւք աստանօր ամենեքեան ի ժո-
ղովացեալ զօրացն յայնոցիկ, Իսկ մայրն իբր
չիք ի մեղս (չքմեղս) եղեալ ոչ ինչ գիտելով
զասասելոցն ի դատերէն, Եւ յետ այսորիկ
եղեալ անտի աղջիկն դիմեաց առ թագաւոր
եղբայրն իւր, եւ յորժամ ետես թագաւորն
զքոյրն իւր՝ տրտմեալ եւ տխուր գիւօք,
նաեւ առանց կոչման եմուտ առաջի իւր՝
թալկացաւ եւ ապա հարցանէր զպատճառն,
եւ նա անկեալ առ ոտս եղբօրն լալով, եւ
ասաց. ո՛վ ամենապատիւ թագաւոր, ո՛վ
նազելի եւ քաղցրիկ թագաւոր եւ եղբայր
իմ, միթէ ո՛չ լուար որ յաւուրս թագաւո-
րութեան քո յորպիսի իրս գործեցաւ յայտնի
եւ հրապարակաւ ի քաղաքն Ստամբուլ,
Քանդի ժողովեալք են ի մի վայր ամենայն
մեծամեծք եւ ռամիկք քաղաքին, եւ եւս
զօրքն քո Ենիիշարիք եւ ճէպէճիք միարան-
եալ նստին յէթ-Մէյտանն, Եւ փակեալ են
զքաղաքն ամենայն, եթէ զոյգէստէնս, եթէ
զչուկայս. եւ գրոհ առեալ բազմազան պատ-
րաստութեամբ գալոց են աստ առ ի կոտո-
րել զմեզ»։ Ասէ թագաւորն, «վասն էր
պատճառի»։ Ասէ քոյրն, «վասն Հօճային քո,
զի ոչ ընդունին զնա այսուհետեւ մուֆթի»։

Եւ այսու նման այլովք բազմօք բանիւք
խօսեցաւ առաջի եղբօրն, քանդի կարի խո-
հեմ, ճոռումբան եւ համարձակասօս է ա-
սին. եւ դարձեալ կական բարձեալ արտաս-
ուելով ասէր. «Արդ ո՛վ հօր եւ մեծ թա-
գաւոր, միթէ վասն առն միոյ սնիրաւի, կո-
տորիցիմք ի զուր եւ ընդունայն ամենեքեանս»։

Ասէ թագաւորն. «Ես զՀօճայն իմ ոչ մատ-
նեմ ի ձեռս նոցա»։ Ասէ քոյրն. «Ապա ո՞ր-
պէս չահիս զմիտս տմբոխին եւ խաղաղե-
ցուցանես զնոսա»։ Ասէ թագաւորն. «Ձամե-
նայնսն զնոսա սրոյ ճարակ արարից»։ Ասէ
քոյրն. «Միթէ կոտորին նոքա զի յոյժ բա-
զումք են»։

Եւ ապա հրամայեաց թագաւորն կոչել
զմայրն իւր եւ ասէ ցմայրն. «Ով մայր իմ,
զի՞նչ իցէ բանս այս զոր խօսի դուստրն քո»։
Եւ մայրն ուրանայր զիրան կեղծաւորու-
թեամբ, Եւ ապա հրամայեաց կոչել զփեսայն

իւր զՀասան փաշայն եւ եհարց ցնա թա-
գաւորն եւ ասէ. «Միթէ ճշմարիտ իցէ բանն
զոր խօսեցաւ կին քո առաջի իմ»։ Ասէ ցնա
փեսայն. «Այո՛ թագաւոր, ճշմարիտ է»։
Ասէ թագաւորն. «Ապա ընդէ՞ր յառաջագոյն
ո՛չ ծանուցիք ինձ»։ Ասէ փեսայ թագաւո-
րին, «Վասն երկիւղի Հօճային քո, զի նա
միշտ ստիպէր զմեզ ոչ ծանուցանել զայս
թագաւորին»։

Եւ յետ այսց բանից եհան զնոսա յերե-
սաց իւրոց։ Եւ ապա յետ այսորիկ կոչեալ
զվէզիրն իւր զկոչեցեալն Ռաւի, եւ ասէ
ցնա թագաւորն. «Ձի՞նչ իցէ լուրս այս զորս
լուայ, ընդէ՞ր խռովեալք են զօրքն որ յիս-
տամբօլ»։ Ասէ վէզիրն, «Այո՛ թագաւոր,
խռովեալ են եւ յամբոխեալ»։ Ասէ թագա-
ւորն. «Վասն ո՞ր պատճառի»։ Ասէ վէզիրն.
«Վասն Հօճային քո»։ Ասէ թագաւորն, «Ըն-
դէ՞ր յառաջագոյն ոչ ազդ արարեր ինձ զայս»։
Պատասխանեաց վէզիրն. «Վասն ահի Հօճային
քանդի նա հրամայեաց մեզ ամենեւին ոչ
զեկուցանել զիրս այս արքայի»։ Ասէ թա-
գաւորն, «Վասն էր նա ոչ կամէր զայս ինձ
ոչ յայտնել»։ Ասէ վէզիրն. «Ձի՞ զօրքն քո
ոչ կամին զնա մնալ մուֆթի այսուհետեւ»։
Յայնժամ բարկացեալ թագաւորն եւ ասէ
զվէզիրն, «Ե՛րթ եւ խաղաղացո՛ւ զնոսա»։ Եւ
եհան զնա յերեսաց իւրոց արտաքս։ Յետ
որոյ կոչեաց զՀօճայն իւր զՄուֆթին եւ ասէ
ցնա. «Ո՛վ Հօճայ, զի՞նչ իցէ պատճառ խռո-
վութեանն Իստամբուլու»։ Պատասխանի եւ
Մուֆթին եւ ասէ. «Ո՛վ թագաւոր նոքա որ
ամբոխեալք են եւ խռովեալք՝ զԵրկուս կա-
մին, այսինքն իջուցանել զքեզ ի թագաւո-
րականդ գահէ եւ զայլ ոք թագաւորեցու-
ցանել. եւ ես ոչ կամուլոյ զայս եւ զՖէթվա
ոչ տալոյ սակին. վասն այնր կամին զիս կո-
րուսանել. եւ զայլ ոմն առնել Մուֆթի. զի
զՖէթվա տացէ նոցա»։ Ասէ թագաւորն,
«Յիրաւի այդպէս է, արդ որո՞վ հնարիւք
կարիցեմք զնոսա յաղթահարել»։ Ասէ Մուֆ-
թին «Արդ կոչեա՞ զվէզիրն քո եւ առ ի նմանէ
զմատանին քո, եւ ես զայլ ոմն արարից քեզ
վէզիր, որ վրէժխնդիր լինիցի հպարտու-
թեանս նոցա, այլ եւ տացից զգրամ եւ զՖէթ-

վա ի ձեռս նորա, զի կոտորեսցէ զնոսա ի սպառ»։ Զայս ասացեալ Մուֆթին եւ ել յերեսաց թագաւորին։

Եւ թագաւորն դարձեալ կոչեաց զվէզիրն ըստ խրատու Մուֆթուն, եւ ասէ ցնա. «Արդ սո՛ւր զմատանին քո յիս»։ Աստանօր սրտասնդեալ վէզիրն եւ համարձակեալ ասաց. «Ով գերամեծար թագաւոր, ահա մատանին քո», եւ հանեալ ի ծոցոյն եցոյց. բայց արտասուելով ասաց. «Ես ծառայ քո զի թէ պէտ զմահս իմ վասն կենաց արքայի հանապաղ յանձնս առեալ եմ եւ առնում իսկ, սակայն եթէ այժմ ասցից զմատանիս քո առքեզ եւ ելից արտաքս յերեսաց քոց՝ նոյն ժամայն զիս սնդամ սնդամ կտրատեն։» Եւ յետ այնորիկ զքեզ եւս ոչ թողուն կենդանի եւ ոչ զմայրն քո եւ ոչ զորդիսն քո եւ ոչ զազգայինս քո։ Արդ աղաչեմ զքոյն հեզութիւնդ, ներեա ինձ եւ անսա՛ ծառայի քո եւ լո՛ւր բանից իմոց, զի մարթացուք կերպիւ իմիք գտանել զհնար խաղաղութեան, խռովութեանս այսմիկ։ Եւ արդ հրամանաւ մեծարգոյ թագաւորութեան քո, առաքեալ բերից զարսն զանոսիկ՝ որք աքսորեցեալք եղեն յէնէզ. եւ վեհափառութիւն քո ինքնին խօսեաց ընդ նոսա»։ Եւ հրաման առեալ վէզիրն ի թագաւորէն եւ դարձոյց զաքսորեալսն եւ եմոյծ առ թագաւորն, եւ խնդիր արարեալ արդի եւ մահսարի նոցին եւ գտեալ բերին եւ ետուն ցթագաւորն եւ ընթերցեալ ծանեաւ, եւ հրամայեաց գրել զհրովարտակ որ էր այսպէս.

«Յետ ողջունիս իմոյ. զայս ծաներուք զուք որ խռովեալք էք եւ զետեղեալ կայք ի մի վայր, այժմ հրամայեմ ձեզ զի խաղաղացեալ դարձիք ի տունս եւ յօթեանս ձեր։ Եւ զՀօճայն իմ այժմ ինձ շնորհեցէք եւ մեք յետ սակաւ աւուրց եկեսցուք յիստամպօլ, եւ անդանօր զոր ինչ եւ ինչերեցէք յինէն արարից ձեզ. ողջ լերուք»։ Եւ տուեալ ըզհրովարտակն եւ արձակեաց զնոսա։ Եւ թագաւորն իրեւ առաքեաց զնոսա Իստամպօլ՝ հրամայեաց վէզիրին զի զօրս գրեցէ եւ նէֆէրամ¹ արարեալ ի Բուժէլի եւ ժողովե-

ցին աստի եւ անտի զզօրս բազումս եւ զփաշայս բազումս եւ լցին զքաղաքն էտրէնու։ Եւ յառաջ քան զայս Բեահեայ պէկին տուեալ զբազում քսակս զի եկեալ յիստամպօլ նոքօք հաճեացի զկամս զօրացն։ Իսկ նա հասեալ ի Զօրու եւ լուեալ զանխոնարհելի վկամս սոցա եւ յետս դարձաւ։ Եւ իրրեւ հասին առաքեալքն ի թագաւորէն հանգերձ հրովարտակօքն, եւ ընթերցան զնոսա յականջս ամբօխն. եւ ո՛չ հաճեցան ի գրեալսն. քանզի ծանեան որ կեղծաւորութեամբ եւ խաբէութեամբ էր գրեցեալքն։ Բայց դարձեալ ակն կալեալք մնային յուսով. եթէ մինչեւ յուրբաթի օրն եկեսցէ թագաւորն, որ էր Յուլիսի վեշտասան, եւ վճարեցեն զՈւրրաթն ի միասին։ Եւ օր ըստ օրէ բազմազան ստօք լնուին զքաղաքս, եւ եւս արհաւրօք բազմօք։ Զի ոմանք վասն խաղաղութեան խօսէին զսուտն եւ ոմանք վասն խռովութեան եւ այլք թէ գալոց է թագաւորն աստ, եւ ոմանք թէ ոչ գայ ինքն, այլ զՄուֆթին հանգերձ որդովք առաքելոց է ասա։

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀԱՂԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Իրիւ Ա. — Գլ. ԺԺ. — Բարի կրօնաւորի մը հրահանգացը վրայ։

Բարի կրօնաւորի վարժը ամեն Հառափնութիւններով զարդարուած պիտի ըլլայ. որպէս զի ա՛յնպիսի ըլլայ ի ներքուստ, ինչպէս կ'երեւի մարդկան տեսութեամբ։ Մանաւանդ թէ՛ դուքսն երեւցածէն իրաւա՛մբ շատ աւելի պիտի ըլլայ ի ներքուստ, որովհետեւ մեր ֆննդը՝ Աստուծոյ կ, զոր կը պատշաճ մեծապէս յարգել՝ ուր ուր ալ ըլլանք, եւ հեշտակներու պէս արդուրեւալ ջրիլ անոր անցելը։

Ամեն օր պիտի կ'անդունկ մեր առաջադրութիւնը եւ մեր եռանդն սրժարծեմք՝ իրեւ թէ այսօր իսկ առաջին անգամ դարձի եկած ըլլայիմք, ու ըսել. Օգնե՛ ինձի, Տէ՛ր Աստուծոյ, քարի առաջադրութեան ու քու սուրբ ծառայութեան մէջ, որ հիմա ա՛յսօր կատարեալ կերպով սկսիմք, վասն զի միկեւ ցարդ ըրածս ոչինչ է։

¹ Նեֆերամ, ընդհանուր զօրաժողով։

Ս. ՖԵՐԱՆՉԻՍԿՈՍ ԻՍԱԿԻՆԵԱՆ

Ս. Ֆրանչիսկոս իր նոր հաստատած եկեղեցիներուն բարգաւաճումը ապահովելէ յետոյ Կոստէն յետեւին գէպ ի Զինաստան 1652, Ապրիլ 14ին: Մալաքայէն անցնելու տանն, ուրիշ առիթներու մէջ ըրածին պէս, խնամեց ժամատարահարները զարմանալի անձնանութեամբ: Յարութիւն տուաւ մեռելի մը, որ սգիտութեամբ թուեալոր նետ մը բերան առնելով մեռած էր: Բայց նոյն քաղքին կառավարիչը յետին աստիճանի բարձրաստութեամբ վարուեցաւ սուրբին հետ: Քառերեան ստիպուեցաւ Մալաքա թողուլ փորթուկայի դեսպանը, որ զինքը Զինաստան պիտի տանէր, և զինքը բերող նաւը ձգելով ուրիշ նաւ մը մանել, և ուղեկից ըլլալ այս նետագաւոր կառավարչին մարդերուն, որոնք իրենց տիրոջ պէս միայն բերտ վերաբերում մը ցոյց կուտային իրեն: Սակայն ճամբորդութեան միջոցին դարձեալ ետ չկեցաւ անոնց բարիք ընելէ: Երբ անոնց խմելու ջուրը լմնցաւ: Սուրբը ծովու ջուրը անոյշ ջրի դարձուց եւ զանոնք ազատեց սոսկալի ծարաւէ մը որ աղիքին կ'այրէր կը բորբոքէր: Անոնց շատ անգամ քարոզեց, յորդորեց որ ետ կենան հեշտախտութենէ և շահամուտութենէ: Եւ անոնց շատ մը կանխազուշակութիւններ բրաւ որոնք ապա իրագործուեցան: Տղայ մը ծափ ընկղմած էր: Վեց օր վերջը ծովուն խորէն հանեց զայն և ողջ առողջ յանձնեց հօրը: Այս հրաշքին վրայ տղուն հայրը որ մահախտական էր դարձաւ քրիստոնեայ եղաւ:

Վերջապէս հասաւ Սանդիան կղզին որ Զինաստանի Գանձոն քաղքին գիմաճն է և անկէ վեց մղան միայն հեռու է: Երբ միջոցներ կը փնտռէր հոն մրտնեղութիւն հակառակ այն արգելքին, որ օտարականաց այն տեղ մտնելը կը խափանէր: Գծնդակ տեղից մը բռնուեցաւ: Ուստի խնդրեց որ զինքը դամաք հանեն: Տարին զինքը ծովեղերքը ձգեցին, նշաւակ օդին ըմբռնեցին և յատկապէս հիւսիսային հովի մը ցրտալիճ շուշին: Այսպէս ամէն օգնութենէ զրկւած մեռնելու վրայ էր, երբ Ժորժ Ելվարէզ անուն փորթուկայցի մը զինքը առաւ տարաւ իր հիւղը, որ սակայն ամէն կողմէ բաց ըլլալով ծովեղերքէն շատ առաւելութիւն մը չունէր: Սուրբը այն տեղ յետին աստիճանի աղքատութեան մէջ անցուց տասներեք օր: Երկու անգամ արիւն առին իրմէ: Բայց այնքան ձախող կերպով որ Սուրբին ջիղերը փստուեցան: Այս յետին աագնապին մէջ ուրիշ կերակուր չունեցաւ, բայց եթէ քիչ մը նուշ զոր նաւապետը տուաւ իրեն իբրեւ ողորմութիւն:

Այս միջոցին, որչափ որ իր վերջին ժամը, որ Աստուած իրեն յայտնած էր, կը մօտենար. այնչափ աւելի կը բորբոքէր ինք՝ յաւիտենական երջանկութեան բաղձանքով: Եռանդուն հառաչանքներ, կարճ բայց սիրալիր աղօթքներ միայն կը լսուէին իր բերնէն: Անդադար կըսէր. Յիսուս, Դաւթի որդի, նայէ՛

իմի գրութեան այնով. կամ երկրպագելով աստուածային երեք անձերուն: Ո՛վ Ամենասուրբ Երրորդութիւն կամ երկինքի թագաւորին օգնութեան կանչելով: Յո՛յց տու որ մայր ես: Վերջապէս Նոյեմբեր 2ին, որ ուրբաթ օր մըն էր, աչքերն համակ արտասուքով թրջած և քնքորէն իր խաչելութեան յարած արտասանեց սա խօսքերը. Յոյս վրադ դրած եմ, Տէր իմ, եւ վստահ եմ թէ ամօրապարս պիտի չըլլամ: Եւ միեւնոյն տանն տագորտած երկնային սարսափութեամբ, որ գէմքին վրայ փայցեցաւ, խաղաղութեամբ հոգին աւանդեց կէսօրէն երկու ժամ յետոյ 1553ին, 16 տարեկան:

Իր մարմինը նաւահանգստին մօտ թաղուեցաւ առանց արարողութեան: Բայց քանի մը օր վերջը երբ տեսն թէ անապական մնացեր է և, քնդհակառակն, ախորժելի հոտ մը կը բուրէ, կրայից անաւակ մը մէջ դրուեցաւ որպէսզի շուտով մը ապառի և կարելի ըլլայ աւելի դիւրութեամբ Հնդկաստան փոխադրել զայն: Բայց և այնպէս ոչ երկար ժամանակը, ոչ կրին ազդեցութիւնը այս պատուական աւանդին վրայ փոփոխութիւն մը չըրին: Փորձուկայցիք զայն իրենց նաւն առին և նախ Մալաքա շերին, ուր նուազեցուց բռնա ժամատարը որ կը հարուածէր ամբողջ քաղքը: Այն տեղէն տարուեցաւ Կոստ, ուր անհատաւորի պատիւներով ընդունուեցաւ: Կոստանոյ այս քաղաքաշտութիւնը վարձատրեց Սուրբը այնքան հրաշքներով զոր տնկարելի է թուել ի՞նչ թէ մանրամասնօրէն պատմել: Ամէն կողմ մեծամեծ հրաշքներ տեղի ունեցան Քառերեանի միջնորդութեամբ և 1623ին Գրիգոր ԺԵ.ի կողմէ սուրբ հաստատուեցաւ:

Վ. Ե. Բ. Ջ.

ՎՃԻՌ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ ԺՈՂՈՎՈՑ(*).

Ամենօրեայ Հաղորդութեան վրայ

Տրիտենիկեան Ս. Ժողովը՝ տեղեակ ըլլալով այն շնորհաց անձառելի գանձերուն, զորս կը վաստակին հաւատացեալք՝ ամենասուրբ Հաղորդութեամբ, այսպէս կը յայտնէ իր միտքը (Նիստ 22. պ. 6). «Ս. Ժողովը կը բաղձայ որ ամէն պատարագի ներկայ զրտնուող հաւատացեալք հաղորդուին ոչ միայն հոգեւոր, այլ և խորհրդաւոր կերպով:»

Այս խօսքերը բացայայտ կերպով կը ցուցնեն թէ Եկեղեցին կը փափաքի որ բոլոր Բրիտանոնեայք այս երկնային հացով ամէն օր կերակրուին և անկէ սրբութեան աւելի առատ պտուղներ քաղեն:

* Յօժարակամ կը հրատարակենք այս թարգմանութիւնը զոր մեզ զրկած է Գեբ. Նանեան Վ. Խոսքերը:

Եկեղեցւոյ այս բաղձանքը՝ Յիսուսի Քրիստոսի բաղձանքն իսկ էր, երբ այս Աստուածային խորհուրդը սահմանեց: Յիսուս, Յիսուս ինքնին շատ հեղ և յայտնի խօսքերով կը ցուցնէ թէ հարկաւոր է յաճախ ուտել իր մարմինը և խմել իր արիւնը, մանաւանդ երբ կ'ըսէ. «Ասիկայ երկնքէն իջած հացն է. ձեր հայրերը կերան մանանան ու մեռան. ով որ այս հացէն ուտէ յաւիտեանս պիտի ապրի» (Յովհ. 6, 59)

Երբ Յիսուս՝ Հրեշտակաց հացը բաղձաւեց հացին և մանանային՝ աշակերտները կրցան դիւրաւ հասկընալ թէ ինչպէս որ մարմինն ամէն օր հացով կը կերակրուի, և, ինչպէս որ անապատին մէջ Երայեցիք ամէն օր մանանայ կերան, այսպէս ալ ամէն օր Քրիստոսեայ հոգին կրնայ կերակրուիլ և զօրանալ այս երկնային հացով:

Ասկէ զատ՝ երբ «Հայր մեր»ին մէջ Յիսուս մեզ կը պատուիրէ ինչորեւ ամենօրեայ հացը, Ս. Հարք՝ գրեթէ միաբան կը սորվեցընեն թէ այդ խօսքերով աւելի հասկընալու ենք Ս. Հաղորդութեամբ ամէն օր ուտելիք հացը, քան թէ մարմնաւոր հացը:

Արդ, Յիսուս Քրիստոս և Եկեղեցին փափաքելով որ ամբողջ Քրիստոսեայք ամէն օր Ս. Սեղանին մերձեանան, գլխաւորապէս կ'ուզեն որ՝ Քրիստոսեայք Սուրբ Խորհրդով Աստուծոյ միացած՝ ոյժ անեն իրենց կիրքերը սանձելու, սրբելու այն թեթեւ մեղքերն՝ զորս ամէն օր կը դորձնեն, և զգուշանալու աւելի ծանր մեղքերէ՝ զորս մարդկային ակարութիւնը կը դորձէ. ուստի հոս խօսքը ամէնէն առաջ, մեր Տիրոջ պատիւն ու մեծարանքը պահպանելու կամ Ս. Հաղորդութիւնը հաղորդողաց առաքյալութեան իրրեւ վարձատրութիւն մը ընելու վրայ չէ: (Ս. Օգոստ. Բարոզ 57, ի Մատթ. 8, 10; Աղոթքին վրայ հ. 7): Ասոր համար Տրիտենդեան Ս. Ժողովը Հաղորդութիւնը կը կոչէ՝ դեկրափ, որ զմեզ ամենօրեայ պակասութիւններէն կ'ազատէ, եւ զմեզ մահու չափ մեղքերէն կը պահէ:

Առաջին Քրիստոսեայք այս Աստուածային կամքն այնպէս լաւ կը հասկընային որ ամէն

օր կենաց եւ զօրութեան սեղանին կը վազէին: «Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոյն, և հաղորդութեան եւ րեկանելոյ հացին» (Գործ. Բ. 42)

Յաջորդ դարերու մէջ ալ այսպէս ըրին, եւ շատ օգուտ քաղեցին իրենց կատարելութեան եւ սրբութեան համար, ինչպէս կը վկայեն Ս. Հարք եւ Եկեղեցական հեղինակները:

Յետոյ բարեպաշտութիւնը պաղեցաւ, բայց մանաւանդ Յանսենեան բորոտութիւնն ամէն կողմ տարածուեցաւ. այն ատեն սկըսան վիճաբանիլ յաճախ եւ ամէնօրեայ Հաղորդութեան համար հարկ եղած տրամադրութեանց վրայ. եւ օրէ օր պահանջեցին իրրեւ կտրելու՝ ունիլ կատարեալ եւ աւելի դժուար տրամադրութիւններ: Այս վիճաբանութիւններն այն պատճառով ունեցան որ՝ շատ քիչ Քրիստոսեայք արժանի համարուեցան ամէն օր հաղորդուելու եւ այս խիստ փրկարար Խորհրդէն աւելի առատ արդիւնքներ քաղելու: Իսկ միւս հաւատացեալք հերիք կը սեպէին հաղորդուիլ տարին անգամ մը, կամ ամիսը անգամ մը կամ՝ շատ շատ՝ չափաւր անգամ մը:

Ասկէ զատ այն աստիճանի խստութեան հասան որ Ս. Սեղանին ստէպ մօտենալէ արգիլեցին հաւատացելոց ամբողջ զասակարգեր, օրինակի համար, վաճառականներն և ամուսնացած անձերը:

Սակայն քանի մը աստուածաբաններ բոլորովին հակառակը պաշտպանեցին. Նիկաոսիով որ Աստուած իրաւունք տուեր է ամէն օր հաղորդուելու, կ'ուզէին որ առանց հաղորդութեան օր մը չանցնի: Եկեղեցւոյ սովորութեանց զէմ շատ մը բանեւ կը պաշտպանէին, եւ ասոնցմէ մին ալ էր որ հաւատացեալք պէտք է հաղորդուին նաեւ Աւագ Ուրբաթ օրը, եւ իրօք ալ զայն կը մատակարարէին այն օրը:

Այս պարագաներու մէջ Ս. Աթոռն իւր պարտքը կատարելէ հտ չկեցաւ. «Երբ մեր ականջը» խօսքերով սկսող Ս. Ժողովոյն 12 փետր. 1679 թուակիր կոնդակն՝ զոր հաստատեց Սրբազան Քահանայապետը Լոնդոն

կենտրոն ժԱ. զատապարտեց այս մոլորութիւններն ու գէշ սովորութիւնները. յայտարարեց միանգամայն որ ամէն կարգի հաւատացեալք, առանց զանազանելու վաճառականներն ու ժամանակակիցներն, իրենց բարեպաշտութեան եւ խոստովանածոր խրատին հետեւելով՝ կրնային շատ շուտ հազորդուիլ:

Յետոյ Աղէքսանդր Ը.ի 7 Դեկտ. 1690 թուակիր «Ամենասուրբ Տէր մեր» կոնդակը զատապարտեց Բայոսի այն նախադասութիւնը՝ որ հաղորդուողներէն կը պահանջէր Աստուծոյ ամենազուտ սէր, զե՛րժ անկատարութեան ամէն խառնուրդէ:

